ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Ընդունեցեք մեր և մեր ժողովրդի հոգևոր զավակց և պաշտոնական մարմնոց զատկական շնորհավորանքն ու սրտագին մաղթանքը Վեհիդ քաջողջության, արևշատության, Մայր Աթոռի անսասանության համար:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Սուրբ Հակոբի միաբանության և ամբողջ հոգևորականության անունից մատուցանում ենք զատկական շնորհավորանք, ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երջանիկ կյանք, արևշատություն Եկեղեցուն, Հայրենիքին և սիրելի ժողովրդին:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Շնորհավորելով Զատկի տոնը ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երկար կյանք:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Վրաստանի թեմի թեմական խորհուրդը և հավատացյալները Զատկի տոնների առթիվ անկեղծորեն ցանկանում են Ձերդ Սրբությանը երկա՜ր երկա՜ր տարիների կյանք և առողջություն՝ ի բարօրություն հայ հավատացյալ ժողովրդի:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵԻՑ

Մեր և Եգիպտոսի հայերի անունից խնդրում ենք Ձերդ Վեհափառությանը՝ ընդունել մեր սրտաբուխ մաղթանքները Ձատկի տոնի առթիվ:

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Ձատկի տոների առթիվ խնդրում ենք ընդունեցեք մեր շնորհավորությունները, վառ ցանկություններն ու մեծարանքը:

Եկեղեցական վարչության նախագահ՝
ԿՈՏՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձերդ Սրբության Քրիստոսի Հարության մեծ տոնի առթիվ և մաղթում ենք արևշատություն, հոգևոր բարձր գործունեության ասպարիզում երջանիկ և հաջող կյանք՝ ի բարօրություն հայ ժողովրդի և եկեղեցիների:

Համբուրում ենք Ձեր Սուրբ Աչը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԹԵՆՔԻՑ

Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ խոնարհաբար կուգանք մատուցանելու Ձերդ Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհուրդին՝ գաղութիս հոգևորական դասուն, ազգային իշխանության և համայն ժողովուրդին շնորհավորանքները:

ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ԽՈՇՈՐՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Ձեր սիրեցյալ հոտը, եկեղեցականները և թեմական-եկեղեցական խորհուրդը շնորհավորում են Ձերդ Սրբությանը՝ Սուրբ Փրկչի Հարության օրվա առթիվ:

Աղոթում ենք Ամենակալին՝ շնորհելու Ձերդ Սրբությանը երկար կյանք և առողջություն՝ ի բարօրություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու:

ՎԱՐԴԳԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԹԱՎՐԻԶԻՑ

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ թեմական ժողովի, թեմական խորհրդի, քահանայից դասի և համայն հավատացյալ ժողովրդի հետ միասին, խոնարհությամբ համբուրում ենք Վեհիդ Սուրբ Աչը և աղոթում ենք Արարչին, որ պարգևի Վեհիդ արևշատություն և երկար կյանք:

Առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ

ԲԱՂԴԱԴԻՑ

Ամբողջ թեմի կողմից շնորհավորում ենք Սուրբ Հայրիկը, ցանկանում ենք Ձեզ առողջություն, արեշատություն:

ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Հանուն ռումինահայ բարեպաշտ, հայրենասեր ժողովրդին, որդիական ջերմ սիրով մաղթում ենք Ձերդ Վեհափառության արեշատություն, առողջ, երջանիկ հովվապետությամբ, վերածնած ծաղկյալ Մայր Հայրենիքի կենսատու արևի տակ: «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹԵՀՐԱՆԻՑ

Շնորհավորում ենք Փրկչի Հարության տոնը, համբուրում ենք Ձեր Սուրբ Աջը ցանկանալով արեշատություն և երջանիկ օրեր:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Թեմական-եկեղեցական խորհուրդը և հավատացյալները շնորհավորում են Ձերդ Սրբությանը և վանքի միաբանությանը Հայրիկի սուրբ տոնի առթիվ: «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ցանկանում ենք Ձեզ մեծ հաջողություն՝ ընդհանուրին ցանկալի խաղաղության համար Ձեր ջանքերի հաջողության գործում:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Հայտնում եմ իմ որդիական երախտագիտությունը արքության պատվին համար՝ շնորհված անարժանիս Ձեր 20 մայիսի 1951 թվի № 429 կոնդակով: Մշտական ջանքս է Մայր Աթոռին և Ձեզ կատարյալ հավատարմությամբ ծառայել Աստուծո, Եկեղեցվո և ժողովրդին: Ի սրտե աղոթում եմ Ձեր առողջության և արեշատության համար: Ընդունեցեք մեր թեմի հոգևորականաց, հոտին և իմ որդիական զատկական շնորհավորանքները և սրտագին մաղթանքները:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Վեհափա՛ռ Տեր.

Հրաշափառ Սուրբ Հարության տոներուն առթիվ կխնդրեմ, որ բարեհաճիք ընդունիլ սրտագին շնորհավորություններս և որդիական բարեմաղթություններս Ձերդ Վեհափառության թանկագին արեշատության համար: Բարձրյալն

Աստված անսասան պահե Հայաստանյայց մեր Սուրբ Եկեղեցին և անոր արժանընտիր Գահակալը, ի պարծանս ազգիս հայոց և մեր սիրելի Հայրենիքին:

Մատչելով ի համբույր Սրբազնասուրբ Աջույդ՝ մնամ Վեհափառ Հայրապետիդ խոնարհ որդի՝

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Աստվածարյալ Վեհափա՛ռ Տեր.

Տյառն մերո հրաշափառ Սուրբ Հարության տոնը որդիական ակնածանքով կշնորհավորեմ Ձերդ Վեհափառության և կխնդրեմ, որ բարեհաճիք ընդունիլ տրուպիս սրտագին բարեմաղթությունները՝ ազգիս մեծագործ ընդհանրական Հայրապետիդ թանկագին կենաց երկարության, քաջառողջության և փառապանծ գահուն անսասանության համար:

Նույն ջերմ բարեմաղթությունները կկրկնե իմ միջոցով (զի գրելու անկարող է) տեր Հովսեփ սրբազան իր Վեհափառ և պաշտելի հոգեծնողին, աղերսելով, որ աղոթք իրեն համար, երբ տարիներ տևող ու շարունակվող իր ֆիզիկական չարչարանքներուն տոկալու կարողություն չէ մնացած վրան. և եթե ցարդ համբերած ու տարած է անհանդուրժելի այդ տանջանքները, այդ եղած է միայն շնորհիվ իր հավատքին ամրության և հոգեկան արիության, որ հիացում կպատճառե զինքը դարմանող բժշկական դասուն և բոլոր այցելուներուն: Շատ փորձեց անձամբ գրելու գոնե քանի մը տող, սակայն չհաջողեցավ անկողնո անշարժության մեջ, և հուզված ու լալագին ինծի հանձնարարեց այդ պարտականության կատարումը: Երկյուղածությամբ կմատչի Ձերդ Վեհափառության Սուրբ Աջույն:

Երկոքին հարազատք Մայր Աթոռս, ինչպես նաև մեր ընտանիքի բոլոր մեծ ու փոքր անդամները տիվ և գիշեր կաղոթենք Ազգին և Եկեղեցիին փառքին ու պարծանքին, Վեհափառ Հայրապետիդ արևշատության և Ձեր բոլոր հայրենանվեր ձեռնարկներուն հաջողությամբ պսակումին համար:

Հարուցյալ Փրկիչը շնորհե աշխարհի խաղաղություն, պետությանց հաշտություն, ազգերու եղբայրություն և Հայաստանյայց Եկեղեցվո ամուր միասնականություն, որուն հեղինակն ու գործադիր վերին իշխանավորն է Ձերդ Սուրբ Օծությունը:

Մատչելով ի համբույր Սուրբ Աջո Օծյալ Վեհիդ՝ կամ և կմնամ հավատարիմ ծառա և հարազատ որդի՝

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԾԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ԲՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Զերդ Վեհափառություն, Զերդ Սրբություն և սիրեցյալդ ի Տեր մեր Քրիստոս.

«Քրիստոս յարեաւ»:

Օրհնյալ է Տերը և Փրկիչը մեր, որ լուսավորել է մեզ իր կենսաբուխ դագաղից բարեշնորհ ուրախությամբ և հաստատել է այն մեզ համար իր հանությամբ թե՝ «հրճուեցարուք»:

Թող ապրի մեր շրջապատում և մեր մեջ այդ հրճվանքը և թող հաղորդացնի մեզ իր լույսով՝ մեր փոխադարձ հարաբերությունների մեջ:

Ողջունում ենք Զեզ հարուցյալ Տիրոջ այդ հրճվանքով, որ պարգևել է մեզ շնորհալի հարության հույսը:

Թող Տիրոջ հրճվանքն ուժ տա Զեզ՝ շարունակելու Սուրբ Եկեղեցուն Զեր բարձր ծառայությունը՝ ի բազմապատկումն Զեր բարեշնորհ պարգևների և հոտի արդյունավետության: «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Եղբայրական սիրով դեպի Զեզ ի Տեր՝

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ԼՈՆԴՈՆԻՑ

Զերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Տեր,

«Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ»:

(ՀՌՈՎՄ. Զ 9)

Մի անգամ ևս քրիստոնեական գիտության ուրախությունը ներթափանցում է մեղքի աշխարհի խավարը և քաղաքական թշնամության և ատելության աշխարհում գտնվող քրիստոնյաներին հաստատում խաղաղության մեջ: Հարության լույսն աղբերանալով Տիրոջ թափուր գերեզմանից՝ ուր դրվել էր Նրա մարմինը, բոլոր քրիստոնյա ժողովուրդների հոգիները լցնում է իր աստվածային լուսավորությամբ: «Ո՞ր է, մահ, յաղթութիւն քո, ո՞ր է, դժոխք, խայթոց քո» (Ա. Կորնթ. ԺԵ 55):

Հարության՝ ավելի քան մի ուրիշ որևէ քրիստոնեական տոնին՝ բոլոր քրիստոնյաները պետք է միացած լինեն, ավելի կարևոր և հիմնական հարցերում, քան այն հարցերը, որոնք բաժանում են նրանց: Ապահովաբար, մեր բաժանումները հեշտությամբ կամ թեթևությամբ կարելի չէ հաղթահարել, բայց, սիրելի՛ Եղբայր, մեզ բոլորիս համար այս անպատմելի ուրախության օրում, մենք բոլորս կանգնած ենք Սուրբ Գերեզմանի շուրջ Աստուծո բոլոր

հրեշտակների հետ և «յոգիս արդարոց կատարելոց» (Եբր. ԺԲ 23) և «ժողովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդոց» (Հայտնք. Ե 9):

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սղմ. ՃԺԸ 24): Ողջունում եմ Ձեզ, սիրելի՛ Եղբայր, սուրբ սիրո համբույրով և ուղարկում եմ իմ ամենաջերմ եղբայրական հարգանքներս ի Քրիստոս Ձեզ, Ձեր հոգևորականության և Ձեր հավատացյալ ժողովրդին:

Աղոթելով որ Աստուծո օրհնությունը անպակաս լինի Ձեր վրայից և Տերը Ձերդ Սրբության պարգևի երկար տարիներ, մնամ Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Տեր՝

ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՈՖՖՐԻ

ՌԻԳԱՅԻՑ

Խնդրում եմ ընդունել իմ սրտագին ողջույնները Ձերդ Սրբությանը և Ձեր աշխատակիցներին՝ Քրիստոսի Հարության սուրբ տոնի առթիվ: Խաղաղություն, առողջություն և ուրախություն Ձեզ:

Լատվիայի Ավետարանական-Լուտերական
եկեղեցու արքեպիսկոպոս՝

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Որդիական սիրով ազդարարում եմ Ձերդ Սրբության ցնծալի «Քրիստոս յարեաւ»ը:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅ